ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԳՀԱՊՁԲ-1/6-5

ք. Երևան 14.07.2018թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբնարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Մեգա Էներգո» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ռ. Ասատրյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով

սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

2.1.8 Հրաժարվել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 8 842 200 (ութ միլիոն ութ հարյուր քառասուներկու հազար երկու հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 10-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Սույն պայմանագրով նախատեսված 3, 6, 7, 19-րդ չափաբաժինների ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվանից հաշված 365 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է

www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են

դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 13 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Սույն պայմանագրով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ ԿԱՊԻ և ԱԿՀ վարչությունը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան Բագրևանդի 5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 02522157
ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Մեգա Էներգո» ՍՊԸ
ք. Երևան Նոր-Նորք, Քոչինյան 4
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570027038800100
...838
ՏՆ...

ՍԱՍՏՐՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-1/6-5 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ՀՀ	Արտադրողի անվանումը	Ապրանքային նշանը	Ծագման երկիրը	Անվանումը	Տեխնիկական բնութագիրը	Արտադրման տարեթիվը
1				Տպասալ CPU-3	Տպասալ CPU Alcatel ԱՀԿ-ի համար Board- CPU-3 OmniPCX 4400 պրոցեսոր	2002թ.
2				Տպասալ CPU-5	Տպասալ CPU Alcatel ԱՀԿ-ի համար Board- CPU-5 OmniPCX 4400 պրոցեսոր	2002թ.
3	Alcatel	Graft	Չինաստան	Հեռախոսային ապարատ Graft 4020	Հեռախոսային ապարատ Graft 4020, Alcatel հեռախոսակայանների համար, հեռախոսի տիպը VoIP, էկրանի տիպը LCD, ինտերֆեյսը LAN, գծերի քանակը 12, ներքին հեռախոսագրքի առակայություն, զանգվող համարի որոշիչ, կոնֆերանս կապի հնարավորություն, բարձրախոսի հնարավորություն,քաշը ոչ պակաս 880 գրամ:	2015թ.
4				Կոնեկտոր հեռախոսի RJ-12 6P6C	Կոնտակտների տեղերի քանակը 6, Կոնտակտների քանակը 6, Կոնտակտների նյութը պղինձ, Իրանի նյութը պոլիկարբոնատ, Աշխատանքային լարումը 250 Վ, Կոնտակտների քայլը 1.02 մմ	2017թ.
5				Մալուխի կցորդիչ	Պոլիէթիլենային թերմոնստացվող խողովակ, ինքնասոնձվող շերտով, SOHS, 33/8-300	2017թ.
6.				Էլեկտրոշաղափ	Տեսակը - Հարվածային, Պատրոնի նվազագույն տրամագիծը - 1.5մմ, Պատրոնի առավելագույն տրամագիծը - 13մմ Ծախսվող հզորությունը - 500 Վատ Պարապ ընթացքի առավելագույն պտույտները - 3000 պտ/ր Հարվածների առավելագույն քանակը - 48000 հարվածներ/րոպե Արագության կարգավորիչ - Առկա, Հակառակպտույտ - Առկա, Սնուցում - 220Վ/50Հց Գայլիկոն 6մմ Նյութը - Բետոնի համար (պորեդիտ), Երկարությունը - 100 մմ Օգտագործվող երկարությունը - 60 մմ, Տրամագիծը - 6 մմ Գայլիկոն 12մմ Նյութը - Բետոնի համար (պորեդիտ), Երկարությունը - 150 մմ, Օգտագործվող երկարությունը - 80 մմ, Տրամագիծը - 12 մմ	2017թ.
7				Էլեկտրոպտուտակահան	Պատրոնի տեսակը - առանց բանալու Աշխատանքային ռեժիմները - Շաղափում, պտուտակների ձգում. Պատրոնի նվազագույն տրամագիծը - 0,8 մմ, Պատրոնի առավելագույն տրամագիծը - 10 մմ Արագությունների քանակը - 2, Պարապ ընթացքի առավելագույն պտույտները - 1400 պտ/ր Հակառակ պտույտ - Առկա, Արագության կարգավորիչ - Էլեկտրոնային Պտտման մոմենտի կարգավորիչ - 25, Սնուցում - Մարտկոցային Մարտկոցի լարումը - ոչ պակաս 14.4 Վ, Մարտկոցի ունակությունը - ոչ պակաս 1500 մԱ ՆԱՍԱԴԿԱ (Խաչաձև) Նյութը - Քրոմ-Վանադիում, Ընդհանուր երկարությունը - 50 մմ Վերջույթը - վեցանկյուն, Համարը (Չափը) - 2 ՆԱՍԱԴԿԱ (Ուղիղ) Նյութը - Քրոմ-Վանադիում, Ընդհանուր երկարությունը - 50 մմ Վերջույթը - վեցանկյուն, Համարը (Չափը) - 2	2017թ.
8				Մոնտաժային դանակ (մեծ)	Երկարությունը - 180 մմ, Սայրի լայնությունը - 18 մմ, Սայրի տեսակը - Կասետային, ջարդվող սեգմենտներով	2017թ.
9				Մոնտաժային դանակ (միջին)	Երկարությունը - 135 մմ, Սայրի լայնությունը - 9.5 մմ, Սայրի տեսակը - Կասետային, ջարդվող սեգմենտներով	2017թ.
10				Պրոյեկտորի լամպ SD110U	Պրոյեկտորի լամպ SD110U, Mitsubishi պրոյեկտորների համար, լամպի տեսակը UHP, աշխատանքային ռեսուրսը առնվազն 2000 ժամ, հզորությունը 200Վատ, մուտքային լարումը 85-265 Վ փոփոխական	2016թ.

					հոսանքից:	
11				Տրանզիստոր Կ114ԼՊ1	Տրանզիստոր Կ114ԼՊ1, կազմված 4 տրամաբանական էլեմենտներից, պարունակում է 20 ինտեգրալային էլեմենտներ	2009թ.
12				Տրանզիստոր Կ114ԼՊ2	Տրանզիստոր Կ114ԼՊ2, կազմված 4 տրամաբանական էլեմենտներից, պարունակում է 20 ինտեգրալային էլեմենտներ	2009թ.
13				Տրանզիստոր Կ114ԼԼ1	Տրանզիստոր Կ114ԼԼ, կազմված 4 տրամաբանական էլեմենտներից, պարունակում է 25 ինտեգրալային էլեմենտներ	2009թ.
14				Տրանզիստոր Կ114ԼԼ2	Տրանզիստոր Կ114ԼԼ2, կազմված 4 տրամաբանական էլեմենտներից, պարունակում է 25 ինտեգրալային էլեմենտներ	2009թ.
15				Տրանզիստոր Կ114ՒԼ	Տրանզիստոր Կ114ՒԼ, կազմված 4 տրամաբանական էլեմենտներից, պարունակում է 25 ինտեգրալային էլեմենտներ	2009թ.
16				ռ/կայանի տրանզիստոր RD12MVS1	IC V-82 ռ/կ-ի համար, RD12MVS1, մետաղյա դիէլեկտրիկ N-channel տիպի տրանզիստոր ԳԿԱ տիրույթի ռադիոկայանների ուժեղարարների համար, հզորությունը 11.5 Վատ, լարումը մինչև 50Վ, աշխատանքային ջերմ, -40 to +110 C	2017թ.
17				Էլ.զոդիչ 220Վ 60Վտ	Էլ.զոդիչ 220Վ 60Վատ	2017թ.
18				հոսանքի սնուցման մալուխ	Սնուցման ուժային ճկուն մալուխ ԿՈՇՍ 4X6, լարերի քանակը 4, տիպը պղնձյա, յուրաքանչյուրի կտրվածքը բազմաթել լարերով 6մմ, լարերի մեկուսիչը ռետինից,արտաքին ծածկույթը ռետինից,մալուխի աշխատանքային նվազագույն երկարությունը 50մ, աշխատանքային ջերմաստիճանը °C: -50 / +65:	2017թ.
19				Սիստեմային հեռախոսային ապարատ	Սիստեմային հեռախոսային ապարատ KX-7633, Panasonic TDA-100 տիպի ավտոմատ հեռախոսային կայանի համար,դիսփլեյը առնվազն 3 տող, 24 սիմվոլ:Հեռախոսը պետք է ունենա բարձրախոսի,գարնիտուրայի միացման, զանգի, հաղորդակցության ցուցիչի հնարավորության ապահովում, ծրագրվող ստեղների քանակը առնվազն 24, ֆունկցիոնալ ստեղների քանակը առնվազն 4, ինտերֆեյսի տիպը USB:	2014թ.
20				Հիմնաթթու	կալի հիդրօքսիդ KOH, սպիտակ գույն, ալկալու տեսակարար պարունակությունը ոչ պակաս 90 %, սոդայի պարունակությունը առավելագույնը 0.5%, հերմետիկ 25 կգ փաթեթով, ջրով լուծվող	2017թ.

Ծանոթություն:

Առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից 3-րդ չափաբաժնի համար ապրանքային նշանի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացումը պարտադիր է, իսկ մնացած չափաբաժինների համար՝ պարտադիր չէ:

Բոլոր ապրանքները պետք է լինեն նոր և չօգտագործված, գործարանային փաթեթավորման տուփի մեջ:

Ապրանքը մատակարարվելու է [illegible] կողմից ՀՀ ԶՈՒ կապի և ԱԿՀ վարչության պահեստ՝ ավան Բաղրամյան ՀՀ ՊՆ 83560 զորամաս:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն

ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

"Մեգա Էներգո" ՍՊԸ

Տնօրեն

[illegible]ՍՏՐՅԱՆ

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/հ	Չափաբաժնի անվանումը	Չափի միավորը	Քանակ	Միավորի գին	Ընդհանուր գումար	2018թ. 3-րդ եռամսյակ
	Էլեկտրոնային պարագաներ (Լարային կապի տեխնիկայի վերանորոգման միջոցներ), այդ թվում՝	դրամ	1			
1	Տպասալ CPU-3	հատ	2	360000	720000	2
2	Տպասալ CPU-5	հատ	2	360000	720000	2
3	Հեռախոսային ապարատ Graft 4020	հատ	12	50000	600000	12
4	Կոննեկտոր հեռախոսի RJ-12 6P6C	հատ	200	30	6000	200
5	Մալուխի կցորդիչ	մ	470	2460	1156200	470
	Էլեկտրոնային պարագաներ (Ռադիոկապի տեխնիկայի վերանորոգման միջոցներ), այդ թվում՝	դրամ	1			
6	Էլեկտրոչափիչ	հատ	4	33000	132000	4
7	Էլեկտրապտտակահան	հատ	4	33000	132000	4
8	Մոնտաժային դանակ (մեծ)	հատ	10	3600	36000	10
9	Մոնտաժային դանակ (միջին)	հատ	10	3000	30000	10
10	Պրոյեկտորի լամպ SD110U	հատ	6	60000	360000	6
11	Տրանզիստոր Կ114ԼՊ1	հատ	200	1200	240000	200
12	Տրանզիստոր Կ114ԼՊ2	հատ	200	1200	240000	200
13	Տրանզիստոր Կ114ԼԼ1	հատ	200	1200	240000	200
14	Տրանզիստոր Կ114ԼԼ2	հատ	200	1200	240000	200
15	Տրանզիստոր Կ114ԻԼ	հատ	200	1200	240000	200
16	ռ/կայանի տրանզիստոր RD12MVS1	հատ	5	10800	54000	5
17	Էլ.զոդիչ 220Վ 60Վտ	հատ	90	2400	216000	90
18	հոսանքի սնուցման մալուխ	մ	400	2700	1080000	400
19	Սիստեմային հեռախոսային ապարատ	հատ	20	60000	1200000	20
	Էլեկտրոնային պարագաներ (Ռադիոռելեային կապի տեխնիկայի վերանորոգման միջոցներ), այդ թվում	դրամ	1			
20	Հիմնաթթու	կգ	500	2400	1200000	500

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Ա. ՇԱՄԲԱՐՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ
"Մեգա Էներգո" ՍՊԸ
Տնօրեն

[illegible]ՅԱՆ

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-1/6-5 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/Հ	Գնման ենթակա ապրանքների անվանումը	CPV կոդ	Վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ.-ին՝ ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 10.12.2018թ.					
			հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	Էլեկտրոնային պարագաներ Տպասալ CPU-3	31711100/1/4/1	720000	720000	720000	720000	720000	720000
2	Էլեկտրոնային պարագաներ Տպասալ CPU-5		720000	720000	720000	720000	720000	720000
3	Էլեկտրոնային պարագաներ Հեռախոսային ապարատ Graft 4020		600000	600000	600000	600000	600000	600000
4	Էլեկտրոնային պարագաներ Կոննեկտոր հեռախոսի RJ-12 6P6C		6000	6000	6000	6000	6000	6000
5	Էլեկտրոնային պարագաներ Մալուխի կցորդիչ		1156200	1156200	1156200	1156200	1156200	1156200
6	Էլեկտրոնային պարագաներ Էլեկտրոշաղափ	31711100/2/4/1	132000	132000	132000	132000	132000	132000
7	Էլեկտրոնային պարագաներ Էլեկտրոպտուտակահան		132000	132000	132000	132000	132000	132000
8	Էլեկտրոնային պարագաներ Մոնտաժային դանակ (մեծ)		36000	36000	36000	36000	36000	36000
9	Էլեկտրոնային պարագաներ Պրոյեկտորի լամպ SD110U		30000	30000	30000	30000	30000	30000
10	Էլեկտրոնային պարագաներ Տրանզիստոր Կ114ԼՊ1		360000	360000	360000	360000	360000	360000
11	Էլեկտրոնային պարագաներ Տրանզիստոր Կ114ԼՊ2		240000	240000	240000	240000	240000	240000
12	Էլեկտրոնային պարագաներ Տրանզիստոր Կ114ԼԼ1		240000	240000	240000	240000	240000	240000
13	Էլեկտրոնային պարագաներ Տրանզիստոր Կ114ԼԼ2		240000	240000	240000	240000	240000	240000
14	Էլեկտրոնային պարագաներ Տրանզիստոր Կ114ԻԼ		240000	240000	240000	240000	240000	240000
15	Էլեկտրոնային պարագաներ ռ/կայանի տրանզիստոր RD12MVSI		240000	240000	240000	240000	240000	240000
16	Էլեկտրոնային պարագաներ Էլ.զոդիչ 220Վ		54000	54000	54000	54000	54000	54000

	60Վտ							
17	Էլեկտրոնային պարագաներ հոսանքի սնուցման մալուխ		216000	216000	216000	216000	216000	216000
18	Էլեկտրոնային պարագաներ Միստեմային հեռախոսային ապարատ		1080000	1080000	1080000	1080000	1080000	1080000
19	Էլեկտրոնային պարագաներ Հիմնաթթու		1200000	1200000	1200000	1200000	1200000	1200000
20	Էլեկտրոնային պարագաներ Տպասալ CPU-3	31711100/3/4/1	1200000	1200000	1200000	1200000	1200000	1200000

Ծանոթություն՝ Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ԴԱՄԲԱՐՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ
"Մ[illegible]
Տնօրեն[illegible]

[illegible]ՍԱՏՐՅԱՆ

Հավելված N 3
N ԳՀԱՊՀԲ-1/6-5 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դրպս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
N ԳՀԱՊՁԲ-1/6-5 պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն